ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ

Ուսուցչի սեփական նախաձեռնությամբ
(կամավոր) ատեստավորման քննության հարցաթերթիկի
ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ----------2
ՆԱԽԱԲԱՆ ----------3
ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ --------3
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ----------4

ՆԱԽԱԲԱՆ

Ուղեցույցում ներկայացված են 2023թ. ‹‹Կերպարվեստ›› առարկան դասավանդող ուսուցիչների սեփական նախաձեռնությամբ (կամավոր) ատեստավորման քննության հարցաթերթիկի կառուցվածքը, առաջադրանքներում ընդգրկված նյութը, պատասխանների ձևաթղթի լրացման կարգը, պատասխանի գնահատման չափանիշները, ինչպես նաև առաջարկվող գրականության ցանկը:

Ուսուցիչների կամավոր ատեստավորման հարցաթերթիկի կազմման համար որպես հիմք են հանդիսացել «Կերպարվեստ» առարկայի հանրակրթական դպրոցի առարկայական ծրագրերը և հանրակրթության պետական չափորոշիչների դրույթները, ինչպես նաև կերպարվեստին առնչվող հիմնարար գիտելիքները:

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հարցաթերթիկը պարունակում է 70 առաջադրանք, որոնցից հնարավոր է վաստակել առավելագույնը 70 միավոր: Կառուցվածքային առումով առաջադրանքներն ունեն հետևյալ երկու հիմնական տեսակները.

1. Ընտրովի պատասխանով առաջադրանքներ, որոնց յուրաքանչյուր հարցին հետևում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից միայն մեկ պատասխանն է ճիշտ: Գնահատման չափանիշը. ճիշտ և լիարժեք պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ կամ թերի պատասխանին, կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում: Բոլոր առաջադրանքները ենթադրում են մեկ ճիշտ պատասխան, հետևաբար մեկից ավելի նշում կատարելու դեպքում տվյալ առաջադրանքը գնահատվում է զրո: Ընտրովի պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուր ճիշտ պատասխանին համապատասխանող վանդակում հարկավոր է դնել X նշանը:
2. Կարճ պատասխանով առաջադրանքներ, որոնց ճիշտ պատասխանին համապատասխանող թվերը պետք է տեղադրել ձևաթղթի համապատասխան վանդակներում: Գնահատման չափանիշը. ճիշտ և լիարժեք պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ կամ թերի պատասխանին, կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում: Կարճ պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուր ճիշտ պատասխանին համապատասխանող վանդակում հարկավոր է դնել համապատասխան թիվը:

Բովանդակային առումով հարցաթերթիկում առկա են «Կերպարվեստ» առարկայի

հանրակրթական դպրոցի ծրագրի բոլոր բաժինները.

-Բնօրինակից նկարչություն

-Թեմատիկ նկարչություն

-Դեկորատիվ նկարչություն

-Արվեստի պատմություն և տեսություն

Հարցերը պարունակում են նաև գծանկարի, գունանկարի, ծեփակերտման շրջանակները շոշափող առաջադրանքներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ[1]

1. Աղասյան Ա., Հակոբյան Հ., Ղազարյան Վ., Հասրաթյան Մ., Հայ արվեստի պատմություն, Երևան, Զանգակ-97, 2009, 576 էջ:
2. Աղասյան Ա., Արվեստի պատմություն. Կերպարվեստ: Ուսումնական ձեռնարկ Երևան, Արմավ, 2020, Գիրք 1, 256 էջ:
3. Աղասյան Ա., Արվեստի պատմություն. Կերպարվեստ: Ուսումնական ձեռնարկ, Երևան, Արմավ, 2022, 308 էջ:
4. Հանրակրթական հիմնական դպրոցի «Կերպարվեստ» առարկայի չափորոշիչ և ծրագիր, 2012թ.
5. Հանրակրթության պետական չափորոշիչ, 09.02.2021թ.

[1] Գրականության ցանկում չնշված որևէ այլ աղբյուր չի կարող հիմք ծառայել բովանդակային բողոքարկման համար: